

ՆԱԽԱԳԻԾ

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2017 թվականի ապրիլի 19-ի
№---L որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒԵԼՈՒԹՅԱՆ**

Երեւան 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
1. Իրավական ոլորտի բարեփոխումներ Եւ իրավական գործառույթներ.....	5
2. Սակագնային քաղաքականություն.....	8
3. Լիցենզավորում	13
4. Սպառողների շահերի պաշտպանության ուղղված աշխատանքներ.....	14
4. 1 Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ.....	14
4. 1.1 Էներգետիկայի բնագավառ.....	15
4. 1.2 Զրային ոլորտ.....	17
4. 2 Սպառողների դիմումների քննարկում.....	18
5. Կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցում Եւ գնումների մոնիթորինգ.....	20
6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն.....	22
7. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ.....	24
8. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը Եւ համագործակցությունը զանգվածային լրատվության միջոցների ու հասարակական կազմակերպությունների հետ.....	32
9. Համագործակցությունը միջազգային կառույցների Եւ Արցախի Հանրապետության կարգավորող մարմնի հետ.....	33
10. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովումը	35

Նախարար

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական գննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում եւ ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական գննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման եւ վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետեւ՝ հանձնաժողով) 2016 թվականին գործել է հետեւյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝ հանձնաժողովի նախագահ,

Շիրազ Կիրակոսյան՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ,

Մուշեղ Կոչեցյան՝ հանձնաժողովի անդամ,

Արթուր Վարդանյան՝ հանձնաժողովի անդամ,

Արմեն Բաղդասարյան՝ հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով, որն ունի հետեւյալ կառուցվածքային ստորաբաժանմները.

- սակագնային քաղաքականության վարչություն,
- ֆինանսական վերլուծության վարչություն,
- իրավաբանական եւ լիցենզավորման վարչություն՝
 - իրավաբանական եւ դատական սպասարկման բաժին,
 - լիցենզավորման բաժին,
- զարգացման եւ մոնիթորինգի վարչություն՝
 - տեխնիկական բաժին,
 - տնտեսագիտական բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն՝

- կարգավորման քաղաքականության բաժին,
- ռեսուրսների կառավարման եւ տեխնոլոգիական զարգացման բաժին,
- դիմում-բողոքների քննարկման եւ նիստերի նախապատրաստման բաժին,
- ներքին առևդիտի բաժին,
- միջազգային համագործակցության բաժին,
- տնտեսական բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին,
- հաշվապահական հաշվառման եւ սոցիալական ծրագրերի իրականացման բաժին,
- գնումների բաժին,
- ընդհանուր բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

1. Իրավական ոլորտի բարեփոխումներ եւ իրավական գործառույթներ

Հանձնաժողովի առաջնահերթ գործառույթներից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը եւ միջազգային առաջավոր փորձի վրա հիմնված բազմակողմանի եւ առավել ճկուն իրավական կարգավորումը՝ ելնելով սպառողների եւ կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման եւ կարգավորման դաշտի բափանցիկության ապահովման առաջնահերթություններից եւ հանրային ծառայությունների ոլորտում միջազգային համագործակցության անհրաժեշտությունից:

Հաշվի առնելով, որ ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում միջազգային ֆինանսական կազմակերպությունների աջակցությամբ իրականացվում են կապիտալ ներդրումների լայնածավալ աշխատանքներ՝ միջազետական էլեկտրահաղորդման գծերի գործող հզորությունների ավելացման համար, որի նպատակներից է նաև հարեւան երկրների էլեկտրաէներգետիկական համակարգերին ինտեգրվելու հնարավորությունների ստեղծումը, ինչպես նաև ընթացքում գտնվող Եվրամիություն-Հայաստանի Հանրապետություն նոր շրջանակային համաձայնագրով նախատեսվող՝ Եվրամիության օրենսդրությանը ՀՀ օրենսդրության (այդ թվում՝ էներգետիկայի բնագավառի) ներդաշնակեցման աշխատանքները՝ հանձնաժողովի կողմից մշակվել եւ համապատասխանաբար՝ 2016 թվականի օգոստոսի 31-ի N241Ն եւ N242Ն որոշումներով հաստատվել են էլեկտրաէներգետիկական համակարգում որակավորված սպառողին եւ որակավորված մատակարարին էլեկտրական էներգիայի հաղորդման եւ բաշխման ցանցեր մուտքի իրավունքի տրամադրման անցումային կանոնները եւ էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման (բաշխող-սպառող (որակավորված սպառող)) եւ հաշվեկշռման ծառայության մատուցման պայմանագրերի օրինակելի ձեւերը:

Էլեկտրական էներգիայի հաղորդման եւ բաշխման ցանցեր երրորդ անձանց մուտքի իրավունքի տրամադրման կանոնների մշակումը բխել է նաև «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրով ամրագրված պահանջներից:

ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման շրջանակում արդեն իսկ կատարվել են առաջին քայլերը, մասնավորապես, հանձնաժողովի 2016 թվականի

փետրվարի 10-ի N20Ա որոշմամբ վերանայվել է վերջնական սպառողներին էլեկտրաէներգիայի միակ մատակարարի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի բացառիկ վաճառքի իրավունքը, իսկ 2016 թվականի հունիսի 24-ի N192Ն որոշմամբ սահմանվել են էլեկտրաէներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագները, որոնք ուժի մեջ են մտել 2016 թվականի օգոստոսի 1-ից:

Այսպիսով՝ որակավորված սպառողին եւ մատակարարին էլեկտրական էներգիայի հաղորդման եւ բաշխման ցանցեր մուտքի իրավունքի տրամադրման անցումային կանոնների եւ դրա հետ կապված պայմանագրերի օրինակելի ձեւերի հաստատումը ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի աստիճանական ազատականացմանն ուղղված քայլերից մեկն է, որը նպատակ ունի ապահովել նաեւ հանձնաժողովի վերը նշված որոշումների կիրարկումը:

Մշակվել եւ հավանության է արժանացել էլեկտրաէներգետիկական շուկայի կատարելագործման եւ կարգավորման նոր գործիքների ներդրման հայեցակարգը՝ միաժամանակ փոփոխություններ կատարելով Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի արտահանման կարգում:

Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացմանն ուղղված ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալությունը հանձնաժողովի հետ համատեղ ձեռնարկել է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի լրամշակման, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական համակարգում ցանցային կանոնների մշակման աշխատանքները: Ցանցային կանոնների մշակման աշխատանքների շրջանակում նախատեսվում է մեկ միասնական փաստաթղթում համախմբել էլեկտրաէներգետիկական համակարգի պլանավորման, կարգավարման ու շուկայի մասնակիցների միջեւ տեխնիկական բնույթի փոխհարաբերությունները կանոնակարգող իրավադրույթները՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային առաջավոր փորձին:

Հանձնաժողովը շարունակել է էներգետիկայի բնագավառում գործումներյան լիցենզավորման կարգի լրամշակման գործընթացը:

Մշակվել է էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված անձանց կողմից տեղեկատվության հասանելիության ապահովման կարգը, որը սահմանում է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, հաշվարկային կենտրոնի, էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման եւ էլեկտրական էներգիայի բաշխման գործումներության լիցենզիա ունեցող անձանց կողմից տեղեկատվության հասանելիության ապահովման ընթացակարգը եւ պայմանները: Վերոնշյալ կարգի համաձայն լիցենզավորված անձինք պարտավոր են ապահովել իրենց կողմից մատուցվող ծառայությունների (դրանց հասանելիության), դրանց սակագների,

ծառայությունների մատուցման տեխնիկական ու տեխնոլոգիական հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը:

Լրամշակվել եւ հաստատվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային մարժայի, «Էլեկտրաէներգետիկական հանակարգի օպերատոր» եւ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ների կողմից էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման սակագների, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագնի հաշվարկման մեթոդիկաները, ջրային ոլորտում սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ջրային ոլորտում գործունեություն իրականացնող անձանց կողմից հանձնաժողով տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգը:

Փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել էլեկտրական էներգիա արտադրող ընկերությունների կողմից առաքված էլեկտրական էներգիայի (հզորության) սակագների հաշվարկման մեթոդիկայում, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգում, «Երեւանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգիայի փոխհոսքերի իրականացումը կանոնակարգող որոշման մեջ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայում:

Հաշվի առնելով, որ 2016 թվականի հունվարի 22-ից ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով կատարված փոփոխությունների համաձայն՝ էականորեն ընդլայնվել են ջրային համակարգում հանձնաժողովի կարգավորման գործառույթները, եւ ելնելով նշված փոփոխություններին իրավական ակտերի համապատասխանեցման անհրաժեշտությունից՝ հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի N295Ն որոշմամբ հաստատվել է ջրային ոլորտում գործունեության լիցենզավորման կարգը, իսկ նույն թվականի նոյեմբերի 30-ի N378Ն եւ N379Ն որոշումներով սահմանվել են համապատասխանաբար՝ խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները եւ նշված ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձեւերը:

Հանձնաժողովը գործուն մասնակցություն է ունեցել Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հետ, վերջինիս խորհրդատուի կողմից մշակված «Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայությունների տնտեսական կարգավորում».

կարգավորման անկախության բարձրացում» նախնական հաշվետվության հիման վրա ՀՀ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման անկախության բարձրացման նպատակով իրավական գործողությունների ծրագրի մշակմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության եւ ԱԶԲ-ի միջեւ նախատեսված «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագրի, փուլ 2 – Ենթածրագրի 1»-ի նախապատրաստական աշխատանքների շրջանակուն ԱԶԲ-ի կողմից մշակված փոխըմբռնման հուշագրի նախագծի քննարկումներին:

ՀՀ նոր Սահմանադրության պահանջներին եւ կարգավորման հիմնական սկզբունքները Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 20-րդ հավելվածով սահմանված՝ բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման ընդհանուր սկզբունքներին համապատասխանեցնելու, ինչպես նաև ԱԶԲ-ի կողմից մշակված «Կարգավորման անկախության բարձրացում» հաշվետվության հիման վրա ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված՝ ՀՀ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման անկախության բարձրացման նպատակով իրավական գործողությունների ծրագրի կատարման անհրաժեշտությունից ելնելով՝ հանձնաժողովի կողմից մշակվել է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի նախին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու նախին» ՀՀ օրենքի նախագիծը: Առաջարկվող փոփոխությունները հիմնականում վերաբերում են հանձնաժողովի անկախության բարձրացմանը՝ միտված նրա ֆինանսավորման, հաշվետվողականության, հանձնաժողովի անդամների նշանակման նոր պահանջների ամրագրման, կառուցվածքային բարեփոխումների եւ սպառողներին առնչվող հարցերում նրանց առավել ակտիվ մասնակցության ապահովման խնդիրներին: Նշված գործընթացին կիետեւի այլ օրենքներում փոփոխությունների կատարումը, ինչից հետո անհրաժեշտաբար փոփոխություններ կկատարվեն նաև հանձնաժողովի համապատասխան իրավական ակտերում:

2. Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա եւ նպատակառողության հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականու տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների եւ կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝

միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման եւ հեռանկարային գարգացման ծրագրեր:

2016 թվականի ընթացքում, ուսումնասիրելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի եւ «Տրանսգազ» ՍՊԸ-ի ներկայացրած սակագների վերանայման հայտերը եւ հաշվի առնվելով Հայաստանի Հանրապետություն ներկրվող բնական գազի գնի նվազեցումը, 2013-2015 թվականներին գազանատակարարման համակարգում իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման (շահույթի եւ մաշվածության տեսքով), դրամ/ԱՄՆ դրամ փոխարժեքի փոփոխման գործոնները՝ հանձնաժողովը վերանայել է գազանատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման, բնական գազի փոխադրման, բաշխման եւ սպառողներին վաճառվող բնական գազի սակագները, որոնք ուժի մեջ են մտել 2016 թվականի հուլիսի 1-ից: Արդյունքում՝ սպառողներին վաճառվող բնական գազի սակագները նվազել են 9.3 դրամ/խմ-ով (ներառյալ ԱԱՀ-ն):

Այնուհետեւ, վեց ամիս անց՝ սպառողներին վաճառվող բնական գազի սակագները նորից նվազեցվել են՝ իիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից հաշվետու տարվա վերջին ներկայացված սակագների վերանայման հայտը: Սակագների վերանայման համար ընկերությունը ներկայացրել էր լրացուցիչ միջոցների ձեւավորման չորս հիմնական աղբյուր՝ Վրաստանի տարածքով բնական գազի տարանցման գնի նվազեցում, սակագների նվազեցման արդյունքում սպառման ծավալների ակնկալվող ած, ֆինանսական ծախսերի օպտիմալացում եւ նշված երեք աղբյուրներից ստացվող ծախսերի տնտեսումների եւ սակագների նվազեցման հետեւանքով չստացվող հասույթի տարբերության փոխհատուցման նպատակով ընկերության բաժնետիրոջ կողմից համապատասխան միջոցների ներգրավում: Արդյունքում՝ 2017 թվականի հունվարի 1-ից սպառողներին վաճառվող բնական գազի միջին կշռութային սակագինը նվազել է եւս շուրջ 9.3 դրամ/խմ-ով (ներառյալ ԱԱՀ-ն): Ընդ որում, հաշվի առնելով ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N1118-Ն եւ N1122-Ն որոշումներով ներկայացված առաջարկությունները, գոյություն ունեցող սպառողական խմբերից առանձնացվել են սոցիալապես անապահով ընտանիք համարվող, գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսությունների եւ վերամշակող (պահածոների, խմիչքների եւ կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող) կազմակերպությունների սպառողական խմբերը՝ նրանց վաճառվող բնական գազի համար սահմանելով էականորեն ցածր սակագներ:

Այսպիսով՝ հաշվետու տարում սպառողներին վաճառվող բնական գազի միջին կշռութային սակագինը նվազել է 18.6 դրամ/խմ-ով (ներառյալ ԱԱՀ-ն):

Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային

մարժայի եւ մյուս ընկերությունների սակագների հաշվարկման մեթոդիկաները եւ 2016 թվականի օգոստոսի 1-ից մինչեւ 2017 թվականի օգոստոսի 1-ը ընկած ժամանակահատվածի համար կանխատեսվող էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության, ներկրման եւ արտահանման հաշվեկշիռը, ջերմային կայաններին վաճառվող բնական գազի սակագնի փոփոխությունը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գործող սակագներում նախորդ տարիներին կրտակված վնասի փոխհատուցման համար միանվագ ներառված գումարի նվազեցման ամիրաժեշտությունը, 2015 թվականին իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման անհրաժեշտությունը եւ էլեկտրաէներգետիկական համակարգում գործող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վրա ազդող մի շարք այլ գործոնների փոփոխությունները՝ հանձնաժողովը վերահաշվարկել եւ հաստատել է արտադրող խոշոր կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության), «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի եւ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման սակագները, որոնք ուժի մեջ են մտել 2016 թվականի օգոստոսի 1-ից: Արդյունքում՝ վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները նվազել են 2.58 դրամ/կվտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն):

Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով բնական գազի սակագների փոփոխությունը՝ հանձնաժողովը վերանայել է նաև «Երեւանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկից առաքվող ջերմային էներգիայի սակագները:

Այնուհետեւ, վեց ամիս անց՝ կրկին վերանայվել են էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների կողմից արտադրվող էլեկտրական էներգիայի (հզորության) եւ ծառայությունների մատուցման սակագները (վճարները՝ հաշվի առնելով ջերմային կայաններին վաճառվող բնական գազի սակագների՝ հաշվետու տարվա ընթացքում երկրորդ փոփոխությունը, 2017 թվականի փետրվարի 1-ից մինչեւ 2018 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար կանխատեսվող էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության, ներկրման եւ արտահանման հաշվեկշիռը եւ մի շարք այլ գործոններ: Ընդ որում, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N1122-Ն որոշմամբ ներկայացված առաջարկությունը, գոյություն ունեցող սպառողական խմբերից առանձնացվել է սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողական խումբը: Արդյունքում, 2017 թվականի փետրվարի 1-ից սոցիալապես անապահով

ընտանիք համարվող սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագինը նվազել է 6.2 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ մնացած սպառողների համար՝ 1.22 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն):

Այսպիսով՝ հաշվետու տարվա ընթացքում սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագինը նվազել է 8.78 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ մնացած սպառողների համար՝ 3.8 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն):

Ելնելով գործող իրավակարգավորումներից՝ վերանայվել են «Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի եւ «Յայնուսկողենարացիա» փակ բաժնետիրական ընկերության «Ինքնավար ջերմային էլեկտրակայան-1 (ԻԶԷԿ-1)» կոգեներացիոն կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Յանձնաժողով ներկայացված հայտերի հիման վրա սահմանվել են 8 նորակառույց փոքր հիդրոէլեկտրակայաններից, 1 նորակառույց հողմային էլեկտրակայանից եւ վերանայվել 3 գործող փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Ելնելով սղաճի եւ արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից, յուրաքանչյուր տարի, համաձայն ընդունված մեթոդիկայի, վերանայվում են վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: 2016 թվականի հուլիսի 1-ից վերահաշվարկվել եւ ուժի մեջ են մտել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի «Լոռի-1», «Արաց» ՍՊԸ-ի «Քաջարան» եւ «Էներգոտեխնիկա» ՍՊԸ-ի «Էներգոտեխնիկա-1» հողմային էլեկտրակայաններից, «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանից եւ 161 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի նոր սակագները:

Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով վերականգնվող էներգետիկայի բնագավառում արեւային կայանների նկատմամբ ներդրողների հետաքրքրվածության աճը եւ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության դիրքորոշումը, հաշվետու տարվա վերջում սահմանվել է մինչեւ 1 ՄՎտ տեղակայված հզորությամբ արեւային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը: Այն սահմանվել է հողմային եւ կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող էլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի սակագնին հավասար:

«Երեւանի ջերմաէլեկտրակենտրոն», «Յայկական ատոմային էլեկտրակայան» եւ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների համար նախատեսված պլանային

նորոգումների ժամկետների փոփոխման հետ կապված՝ ճշգրտվել են նշված ընկերությունների կայանների 2016 թվականի պայմանագրային եւ տնօրինելի էլեկտրական հղորությունների չափաքանակները։ Հաշվետու տարվա վերջին ուսումնասիրվել եւ հաստատվել են էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող 2017 թվականի պայմանագրային եւ տնօրինելի հղորությունների չափաքանակները։

Հաշվի առնելով «Երեւան Զուր» ՓԲԸ-ի վարձակալության պայմանագրի ժամկետի, ջրային համակարգի օգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման հանգամանքը եւ նպատակ ունենալով կանոնակարգել վարձակալության 10-րդ հաշվարկային տարվա ավարտից հետո իրականացվող սակագնային քաղաքականությունը՝ հաշվետու տարում հանձնաժողովը փոփոխություն է կատարել «Երեւան Զուր» ՓԲԸ-ի ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմաններում, որը հնարավորություն է տվել վարձակալության պայմանագրի երկարացված ժամանակահատվածի համար (մինչեւ 2017 թվականի հունվարի 1-ը) «Երեւան Զուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները թողնել անփոփոխ։

Հաշվետու տարվա ընթացքում «Երեւան Զուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռիջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» եւ «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի եւ այլ գույքի օգտագործման իրավունքը 15 տարով վարձակալությամբ փոխանցելու նպատակով ՀՀ կառավարության կողմից կազմակերպված վարձակալի ընտրության միջազգային մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվեց ֆրանսիական «Վեոլիա Օ-Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերությունը, որը հիմնադրեց «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ն։ Մրցույթի արդյունքում վարձակալության 15 տարիների համար ձեւավորվեցին խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման բազիսային սակագները, որոնք սկսած վարձակալության երկրորդ տարվանից ճշգրտվելու են՝ հաշվի առնելով մանրածախ ջրամատակարարման ծավալների փոփոխությունը, սղաճը եւ էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխությունը։ Ընդ որում, համաձայն «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ին տրամադրված լիցենզիայի պայմանների, վարձակալության առաջին տարվա (2017 թվական) համար սահմանվել են մրցույթի արդյունքում ձեւավորված՝ խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման բազիսային սակագները։ Արդյունքում, 2017 թվականի հունվարի 1-ից «Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածքի բաժանորդների համար խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման ծառայությունների մատուցման գումարային սակագինը նվազել է 22.63

դրամ/իսմ-ով (Աներառյալ ԱԱՀ-ն), «Լուսի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքի բաժանորդների համար՝ 0.98 դրամ/իսմ-ով, (Աներառյալ ԱԱՀ-ն), «Ջայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքի բաժանորդների համար՝ մնացել է գրեթե անփոփոխ, իսկ «Երեւան Ջուր» եւ «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների սպասարկման տարածքի բաժանորդների համար բարձրացել է համապատասխանաբար՝ 9.744 եւ 7.79 դրամ/իսմ-ով (Աներառյալ ԱԱՀ-ն):

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում մատուցվող սակագնային փաթեթների տեսականին ընդլայնելու Եւ բաժանորդներին ընտրության ավելի մեծ հնարավորություն ընձեռելու, ինչպես նաև այդ ծառայությունների շուկայում մրցակցության զարգացմանը խթանելու նպատակով՝ սահմանվել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից 2048կբիթ/վրկ թողունակությամբ E-1 կապուղով մատուցվող ծառայությունների «E-1 այլընտրանքային» սակագնային փաթեթը:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ հաստատվել են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2017 թվականի անվանական կազմը եւ, հաշվի առնելով յուրաքանչյուր կարգավորման պարտադիր վճար վճարողի իրացման շրջանառությունը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույթաչափերը:

3.Լիցենզավորում

Էներգետիկայի բնագավառում տրամադրվել է Էլեկտրական էներգիայի արտադրության 6 լիցենզիա, քննարկվել՝ լիցենզիայի վերաձեւակերպման 10, լիցենզիաների արտադրության երկարաձգման 2, լիցենզիաների կառուցման ժամանակահատվածի երկարաձգման 21 եւ արտադրության փուլի անցնելու 6 հայտեր: Ուժի կողործ է ճանաչվել էներգետիկայի բնագավառի 7 լիցենզիա:

2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում գործել են 178 փոքր հիդրոէլեկտրակայաններ, եւս 33-ը գտնվում են կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 328 ՄՎտ, եւ դրանք միջին տարեկան արդյունքներով կարող են արտադրել շուրջ 880 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 74 ՄՎտ, եւ սպասվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 258 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 211 փոքր

հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 402 ՄՎտ հզորություն եւ միջին տարեկան արդյունքներով կարտադրեն շուրջ 1,14 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրամադրվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի 13 լիցենզիա, ռադիոհաճախականությունների օգտագործման 15, սիրողական ռադիոյի 12 եւ համարների գրաղեցման 3 թույլտվություններ:

Զրային ոլորտում խմելու ջրի մատակարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա է տրամադրվել «Վեոլիա Զուր» փակ բաժնետիրական ընկերությանը:

Հանձնաժողովի կողմից իրավական փորձաքննություն են անցել եւ գրանցվել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջեւ կնքված 413 պայմանագրեր:

4. Սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներ

4.1 Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ

Կարգավորվող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների ապահովման գործընթացը մշտապես գտնվում է հանձնաժողովի ուշադրության կենտրոնում՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության, այնպես եւ տեղում իրականացվող ուսումնասիրությունների միջոցով։ Այս գործիքակազմի կիրառմամբ հանձնաժողովը մշտապես բարձրացնում է իրականացվող մոնիթորինգի արդյունավետությունը։ Հանձնաժողովն էլեկտրական էներգիա, բնական գազ եւ խմելու ջուր մատակարարող ընկերություններից սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ ստացված տեղեկատվության, ինչպես նաև սպառողների կողմից հանձնաժողով ուղղված դիմում–բողոքների բնույթի եւ բովանդակության ուսումնասիրության հիման վրա մշտական մոնիթորինգի է ենթարկում՝

- Էլեկտրական էներգիա, բնական գազ եւ խմելու ջուր մատակարարող ընկերությունների՝ սպառողների մատակարարման ընդհատումների քանակի եւ տեւողության ցուցանիշները,

- Էլեկտրական էներգիա, բնական գազ եւ խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին եւ հարցադրումներին պատասխանելու ժամկետները,
- սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի եւ տետողության հաշվարկային ցուցանիշները,
- առեւտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա եւ բնական գազ մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները եւ հաշվարկված տույժերը,
- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացում սահմանված ժամկետների խախտումները եւ դրանց պատճառները:

Սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշներից շեղումների դեպքում մատակարար ընկերությունների հետ պարբերաբար իրականացվել եւ իրականացվում են առկա խնդիրների կարգավորման ուղղված քննարկումներ, մշակվում են միջոցառումներ՝ նման խախտումները հետագայում բացառելու նպատակով: Յարկ է նշել, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը եռամսյակային կտրվածքով հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (www.psrc.am):

4.1.1 Էներգետիկայի բնագավառ

2016 թվականին կրկին անդրադարձ է կատարվել «Գազպրոն Արմենիա» եւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության ձեւերի լրամշակմանը: Բնական գազի մատակարարման եւ օգտագործման կանոնների համաձայն՝ բաժանորդների գազամատակարարման ընդհատումների քանակը տարեկան կտրվածքով չպետք է գերազանցի 4 անգամը, իսկ յուրաքանչյուր ընդհատման առավելագույն տետողությունը՝ 36 ժամը: «Գազպրոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունում 2016 թվականի հոկտեմբերի 1-ից ներդրվել է տեղեկատվական ձեւ, որը ներառում է բաժանորդների տարեկան կտրվածքով ընդհատումների քանակը, ինչի արդյունքում կբարձրանա բաժանորդների գազամատակարարման ընդհատումների քանակի վերահսկելիության աստիճանը:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության համար

նույնպես ներդրվել են նոր տեղեկատվական ձեւեր, որոնց արդյունքում ինչպես հանձնաժողովը, այնպես եւ մատակարար ընկերությունը հնարավորություն կունենան նախօրոք թիրախավորել այն աշխատանքները, որոնք ներդրումային ծրագրերուն ընդգրկվելուց հետո կնպաստեն սպառողների սպասարկման որակի բարձրացմանը, ինչպես արտապլանային ընդհատումների, այնպես եւ լարման շեղումների քանակի եւ տեւողության նվազեցման ուղղությամբ:

Հանձնաժողովը՝ ուսումնասիրելով էլեկտրական էներգիայի մատակարարման եւ օգտագործման որորուուն առկա խնդիրները եւ հաշվի առնելով բաժանորդների դիմում-բողոքները, 2016 թվականին լրամշակել է էլեկտրական էներգիայի մատակարարման եւ օգտագործման կանոնները: Մասնավորապես.

- Նոր սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման պայմանգիր կնքելու ժամկետը սահմանվել է 5 աշխատանքային օր՝ անհրաժեշտ նախագծային եւ նախահաշվային փաստաթղթերի, տեխնիկական նկարագրի մշակման աշխատանքները, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների եւ այլ անձանց հետ անհրաժեշտ համաձայնեցումների իրականացումը տեղափոխելով երկրորդ փուլ՝ էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելուց հետո: Այս փոփոխությունը հնարավորություն կտա նվազեցնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի եւ դիմող անձանց միջեւ մինչեւ միացման պայմանագրի կնքման պահը ժագող ռիսկերը:
- Լրամշակվել է առեւտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում սպառված էլեկտրաէներգիայի վերահաշվարկման կարգը, որում ներառվել է նաեւ վերահաշվարկը էլեկտրական էներգիայի հաշվառման եւ վերահսկման ավտոմատացված համակարգի միջոցով իրականացնելու տարրերակը:
- Ներառվել է դրույթ, համաձայն որի հանձնաժողովը, սպառողի եւ մատակարարի շահերի հավասարակշռման նպատակով, առանձին դեպքերում՝ սպառման առանձնահատկություններով պայմանավորված, կարող է ընդունել սպառված էլեկտրաէներգիայի վերահաշվարկման վերաբերյալ անհատական որոշումներ:
- Մյուս էական փոփոխությունը վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների մոտ դարձափոխիչային հաշվիչների եւ որակավորված սպառողների մոտ ավտոմատ հաշվառման համակարգերի տեղակայման դրույթն է: Այս սարքավորումները, ինչպես եւ էլեկտրոնային հաշվիչների դեպքում նախատեսվում է, որ դրանք տեղակայվում են մատակարարի կողմից:

Հանձնաժողովը՝ ուսումնասիրելով գազամատակարարման եւ բնական գազի

օգտագործման ոլորտում առկա խնդիրները եւ հաշվի առնելով բաժանորդների դիմում-բողոքները, 2016 թվականին լրամշակել է նաեւ բնական գազի մատակարարման եւ օգտագործման կանոնները: Մասնավորապես.

- Հստակեցվել են նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման ընթացակարգերը, սահմանվել են աշխատանքների իրականացման ժամկետները, հստակեցվել է նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման վճարի մեջությունը եւ դրա՝ մատակարարված բնական գազի արժեքից նվազեցման գումարի հաշվարկը: Միեւնույն ժամանակ, մշակվել է գազամատակարարման ցանցին միացման պայմանագրի օրինակելի ձեւը եւ լրամշակվել նոր գազասպառման համակարգի նախագծման, կառուցման եւ կարգաբերման պայմանագիրը:
- Լրամշակվել են առեւտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում սպառված գազի վերահաշվարկման բանաձեւերը եւ մեթոդաբանությունը, այդ թվում նախատեսվել է նոր դրույք՝ էլեկտրոնային ճշտիչներով հագեցված առեւտրային հաշվառքի սարքի պարագայում վերահաշվարկը կատարել էլեկտրոնային ճշտիչների տվյալների հիման վրա, ինչպես նաեւ սահմանվել է հաշվիչի կանգի կամ ցուցմունքի արտածման անհնարինության դեպքում վերահաշվարկման կարգը:
- Բնական գազի սպառման ընթացքում բաժանորդների անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով խմբագրվել են բաժանորդների գազամատակարարման դադարեցմանը եւ վերականգնմանը վերաբերող կետերը, որի արդյունքում ավելացվել են մատակարարի իրավունքները գազամատակարարման ընդհատման, ինչպես նաեւ պարտականությունները՝ բաժանորդի կողմից խախտումները վերացնելուց հետո՝ հնարավորինս սեղմ ժամկետում այն վերականգնելու հարցում:

4.1.2 Զրային ոլորտ

Հանձնաժողովն իր գործառույթների տիրությում հետեւողական քայլեր է ձեռնարկում խմելու ջրի մատակարարման ոլորտում գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի պայմանների մոնիթորինգի իրականացման ուղղությամբ:

Շարունակական բնույթ են կրում սպասարկման որակի նվազագույն պահանջների առավել հստակեցման ուղղությամբ տարվող աշխատանքները: Մասնավորապես,

հանձնաժողովը յուրաքանչյուր տարի ուսումնասիրում է սպառողների ջրամատակարարման նվազագույն տելողության ցուցանիշները եւ սահմանում ջրամատակարարման նվազագույն տելողության նոր՝ բարելավված ցուցանիշներ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս տարեցտարի բարելավել սպառողների ջրամատակարարման նվազագույն տելողությունները: Առավել մեծ ուշադրություն է դարձվում համեմատաբար քիչ տելողությամբ ջրամատակարարում ունեցող սպառողների ջրամատակարարման բարելավմանը:

Հանձնաժողովը, ելնելով մոնիթորինգի աշխատանքների բարելավման անհրաժեշտությունից, 2016 թվականին լրամշակել է հանձնաժողով ներկայացվող տեղեկատվությունների ձեւերը, որոնք գործողության մեջ են մտել 2017 թվականից:

4.2 Սպառողների դիմումների քննարկում

Հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների հետ առաջացած սպառողների վեճերի կարգավորման կամ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում մատուցվող ծառայությունների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով 2016 թվականին հանձնաժողովը կազմակերպություններից (նաեւ սպառողների շահերը պաշտպանող) եւ ֆիզիկական անձանցից ստացել է 812 դիմում, որոնցից 331-ը՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով, իսկ 481-ը՝ բանավոր: Դիմումները քննարկվել են 33 օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում, դրանցից 160-ը ստացել են դրական լուծում, 652-ը՝ համապատասխան պարզաբանումներ: Գրավոր կամ էլեկտրոնային եղանակով հանձնաժողով ներկայացված 331 դիմումից 183-ը վերաբերել են էլեկտրական էներգիայի մատակարարմանը, 89-ը՝ բնական գազի մատակարարմանը, 33-ը՝ խմելու ջրի մատակարարմանը, 24-ը՝ հեռահաղորդակցությանը եւ 2-ը՝ ջերմանատակարարման եւ փոստային կապի բնագավառներին, մասնավորապես.

- Էլեկտրական էներգիայի մատակարարմանն առնչվող 183 դիմումներից 60-ը վերաբերել են վճարման հաշիվներին անհամաձայնությանը, 27-ը՝ էլեկտրամատակարարման ընդհատումներին, 33-ը՝ նոր սպառող գրանցվելու ընթացակարգին, 17-ը՝ էլեկտրաէներգիայի որակին, 7-ը՝ էլեկտրոնային հաշվիների ժամային շեղումներին եւ 39-ը՝ այլ բնույթի,
- բնական գազի մատակարարմանն առնչվող 89 դիմումներից 7-ը վերաբերել են վճարման հաշիվներին անհամաձայնությանը, 49-ը՝ սպառված բնական գազի վերահաշվարկներին անհամաձայնությանը, 9-ը՝ գազամատակարարման

ընդհատումներին, եւս 9-ը՝ ներտնային տեխնիկական սպասարկմանը եւ 15-ը՝ այլ բնույթի,

- խմելու ջրի մատակարարմանն առնչվող 33 դիմումներից 8-ը վերաբերել են վճարման հաշիվներին անհամաձայնությանը, 7-ը՝ ջրամատակարարման գրաֆիկների խախտմանը, 6-ը՝ մատակարարվող խմելու ջրի ծնշմանը, 6-ը՝ ջրամատակարարման ցանցերի եւ կոյուղագծերի տեխնիկական վիճակին եւ եւս 6-ը՝ այլ բնույթի,
- հեռահաղորդակցությանն առնչվող 24 դիմումներից 13-ը վերաբերել են վճարման հաշիվներին անհամաձայնությանը, 1-ը՝ նոր բաժանորդ գրանցելուն եւ 10-ը՝ այլ բնույթի:

Գրավոր կամ էլեկտրոնային եղանակով հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների առարկայի ծագման իրավական կամ կազմակերպական պատճառների եւ մատակարարների ներկայացրած եռամսյակային հաշվետվությունների վերլուծությունների արդյունքները հաշվի են առնվել էլեկտրական էներգիայի եւ բնական գազի մատակարարման եւ օգտագործման կանոնների լրանշակման, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների մշակման ընթացքում: Մասնավորապես, փոփոխություններ են կատարվել էլեկտրական էներգիայի մատակարարման եւ օգտագործման կանոններում՝ նոր սպառող գրանցվելու եւ բնական գազի մատակարարման եւ օգտագործման կանոններում՝ սպառված բնական գազի վերահաշվարկի ընթացակարգերում:

Դանձնաժողովում գործող թեժ գծի հեռախոսահամարով, ինչպես նաև հանձնաժողով այցելելով, անհատ բաժանորդները եւ կազմակերպությունների ներկայացուցիչները խորհրդատվություն են ստացել մատակարար-սպառող հարաբերություններում իրենց իրավուքների եւ պարտականությունների, իսկ դրանց խախտման դեպքում՝ անհրաժեշտ քայլերի եւ գործողությունների վերաբերյալ: Դանձնաժողով բանավոր ներկայացված 481 դիմումներից 231-ը վերաբերել են էլեկտրական էներգիայի մատակարարմանը, 131-ը՝ բնական գազի մատակարարմանը, 96-ը՝ խմելու ջրի մատակարարմանը, իսկ 23-ը՝ հեռահաղորդակցության բնագավառին:

Սպառողը հնարավորություն է ունեցել նաև անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի «Տեղեկատվություն սպառողին» եւ «Դարց ու պատասխան» բաժիններից: Դանձնաժողովի

պաշտոնական ինտերնետային կայքում գործող՝ «Հետեւել դիմումի ընթացքին» բաժնում համապատասխան տեղեկատվություն ներբեռնելու միջոցով դիմումատուին հնարավորություն է ընձեռնվել հետեւելու իր դիմումի քննարկման ընթացքին:

2016 թվականի ընթացքում հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նկատի ունենալով, որ 2017 թվականից խմելու ջրի մատակարարումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է մեկ միասնական օպերատորի կողմից, հանձնաժողովը սահմանել է խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձի կողմից բաժանորդների դիմում-բողոքների քննարկման վերաբերյալ տեղեկատվությունը հանձնաժողով ներկայացնելու նոր ընթացակարգ:

5. Կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցում եւ գնումների մոնիթորինգ

Հանձնաժողովի գործառույթներից իր կարեւորությամբ առանձնանում է ներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ եւ երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության եւ համաձայնեցման գործընթացը, այդ թվում՝ ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու իրապարակումը: Նշված աշխատանքների իրականացումը կարեւոր է սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար եւ օգտագործվող ծավալի գնահատման, այդ համատեքստում անարդյունավետ եւ ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման եւ վերհանման առումով՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի եւ բնական գազի սակագներում դրանք չներառելու սկզբունքից ելնելով: Այդ նպատակով հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում եւ համաձայնություն է տալիս ներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև ամփոփում ընկերությունների նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները եւ իրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

2016 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր են իրականացրել «Հայաստանի

էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» եւ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունները:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագրով միտված է Սեւան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադի արդիականացմանը, հիդրոկառույցների վերականգնմանը եւ հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, իսկ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» եւ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերը՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների սպառման համակարգերի ցանցին միացմանը, առեւտրային հաշվառման համակարգերի կատարելագործմանը, հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, ժամանակակից տեխնիկայի եւ տեխնոլոգիաների ներդրմանը, ինչպես նաև ընկերությունների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ ներդրումների իրականացմանը:

Հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձնում էլեկտրական էներգիայի մատակարարման եւ բնական գազի բաշխման գործունեություն իրականացնող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ առաջնահերթություն տալով սպասարկման որակի ցուցանիշների առավել ցածր մակարդակ ունեցող հատվածներում ներդրումների իրականացմանը:

2016 թվականի ընթացքում շարունակվել է էներգետիկայի բնագավառուն կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման եւ համաձայնեցման գործընթացը: Վերլուծության են ենթարկվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ների եւ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» հիմնարկի 2015 թվականի ներդրումային գործունեության արդյունքները:

Քննարկվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր», «Հայկական ատոմային էլեկտրակայան» եւ «ՔոնթուրԳլոբալ Հիորո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից համաձայնեցման ներկայացված ներդրումային ծրագրերը եւ ընդունվել են համապատասխան որոշումներ:

Հանձնաժողովը մշտապես հետեւում է նաև իր կարգավորման դաշտում գործող «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ԱրմենՏել» ՓԲԸ-ների, «Տրամսգազ» ՍՊԸ-ի եւ

«Հրազդեկ» ԲԲԸ-ի կողմից իրականացվող գնումների արդյունավետությանն ու թափանցիկությանը: Վերջիններիս կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով, իրականացվող գնումների մասին ողջ տեղեկատվությունը ներկայում է իրապարակվում է ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես եւ ընկերությունների պաշտոնական ինտերնետային կայքերում:

Համաձայն կարգավորվող անձանց գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի, հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների քանակի եւ ժամանակացուցիչ գնահատման նպատակով իրականացվել է նշված անձանց կողմից իրապարակվող գնումների պլանների մոնիթորինգ, որի արդյունքները իրապարակվել են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Նույն ժամանակահատվածում իրականացվել է նաև կարգավորվող անձանց գնումների առանձին գործարքների մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչեւ գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի եւ մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը:

6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման եւ լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս ձեւավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

2016 թվականի ընթացքում եներգետիկայի բնագավառի եւ ջրային համակարգի կարգավորվող ընկերությունները, «ԱրմենՏել», «Հայփոստ», «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունները հանձնաժողովի սահմանած ձեւերով եւ պարբերականությամբ ներկայացրել են ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է վերջիններիս ֆինանսական վիճակի եւ գործունեության արդյունքների վերլուծություն:

Կարգավորվող ընկերությունների դրամական միջոցների շարժն առավել մանրամասն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովն էլեկտրաէներգետիկական եւ գազամատակարարման համակարգերի համապատասխան ընկերությունների համար մշակել է դրամական հոսքերի շարժի վերաբերյալ տեղեկատվական նոր ձեւեր:

Լրամշակվել են նաև էլեկտրաէներգետիկական եւ գազամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունների համապատասխան ձեւերը:

«Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հանձնաժողովը մշակել եւ հաստատել է վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի եւ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի մատակարարած էլեկտրական էներգիայի դիմաց հատուցում տրամադրելու կարգը:

Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման եւ էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայաններին եւ ծառայություններ մատուցող ընկերություններին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով եւ ժամկետներում վճարումների կատարման գործընթացը վերահսկելու նպատակով հանձնաժողովն ամսական արդյունքներով ստացել վերլուծել եւ ամփոփել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հատուկ հաշիվներում դրամական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվության ձեւը:

Վերը նշված գործընթացի բարելավման նպատակով լրամշակվել է հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի N313Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հատուկ հաշիվներում դրամական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվության ձեւը:

Հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության թափանցիկությունն ապահովելու եւ այդ առումով հանրության շրջանում վստահությունն ամրապնդելու նպատակով՝ հանձնաժողովը վերանայել եւ լրամշակել է էներգետիկայի բնագավառի խոշոր ընկերություններում ֆինանսատնտեսական գործունեության առլիիտի իրականացման պայմանները, ինչի արդյունքում նշված ընկերությունները առլիիտի գործընթացն ավարտելուց հետո առլիիտորական եզրակացության եւ համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատճենները պետք է ներկայացնեն հանձնաժողով եւ հրապարակեն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների <http://www.azdarar.am> պաշտոնական ինտերնետային կայքում:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման եւ ջրային համակարգերի

գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

7. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ

2016 թվականի ընթացքում հանձնաժողովը, գործելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում եւ հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները, աշխատանքներ է իրականացրել բնագավառում գործարար եւ ներդրումային միջավայրի բարելավման, մրցակցության խթանման, շարժական կապի ծառայությունների հասանելիության ապահովման, բաժանորդների իրավունքների եւ շահերի պաշտպանության, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների եւ ծառայությունների ներդրման ուղղությամբ: Մասնավորապես, կարեւորվում են իրականացված հետեւյալ աշխատանքները.

- ՀՀ տարածքում հանրային շարժական կապի ցանցերի զարգացման եւ ծածկույթների ընդլայնման գործընթացի շրջանակում, այդ թվում՝ հանձնաժողովի կողմից սահմանված լիցենզիոն պարտավորությունների հիման վրա, «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական եւ «Յուլքոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները շարունակել են արդիականացնել իրենց հանրային շարժական կապի ցանցերն ու ծածկույթները: Կատարված աշխատանքների արդյունքում՝ 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքային եւ գյուղական համայնքներն ապահովված են առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի ծածկույթով: Ընդ որում, համայնքների 3,4 տոկոսն ապահովված է 1 օպերատորի, 16,3 տոկոսը՝ 2 օպերատորների եւ 80.3 տոկոսը՝ 3 օպերատորների հանրային շարժական կապի ծածկույթով: Հանրային շարժական կապի ծածկույթի ընդլայնման եւ տեխնոլոգիական զարգացման աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:
- ՀՀ մարզերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հեռախոսագծերի արդիականացման գործընթացի շրջանակում հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների համաձայն՝ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությունը լիցենզիոն պարտավորությունների հիման վրա հեռախոսագծերի արդիականացման ենթակա թվով 830 բնակավայրում

անլար տեխնոլոգիայի կիրառմամբ արդիականացրել է CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հանրային ամրակցված հեռախոսային ցանցի հեռախոսագծերը, ինչը հնարավորություն է ընձեռում այդ հեռախոսագծերով ստանալ ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ:

- Բացի այդ, հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 1-ի №208Ա որոշման համաձայն սահմանվել է, որ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն պետք է 3 տարվա ընթացքում հանրապետության 40 մարզային բնակավայրերում ապահովի լայնաշերտ ինտերնետ հասանելիություն՝ օպտիկամանրաթելային կապուղիների միջոցով։ Մասնավորապես, 2016 թվականի ընթացքում նշված բնակավայրերից ընկերությունը օպտիկամանրաթելային կապուղիների միջոցով լայնաշերտ ինտերնետ հասանելիություն է ապահովել 17 մարզային բնակավայրերում։
- Մշակվել է Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա դեսպանություններին, հյուպատոսական հիմնարկներին, դիվանագիտական կարգավիճակ ունեցող միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններին ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը, ըստ որի սահմանվել է Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա դեսպանությունների, հյուպատոսական հիմնարկների, դիվանագիտական կարգավիճակ ունեցող միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (մերժման), գործողության ժամկետի երկարաձգման, կասեցման եւ դադարեցման ընթացակարգերը։ Թույլտվությունները տրամադրվում են մինչեւ 10 տարի ժամկետով՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության միջնորդությամբ ներկայացված նշված օտարերկրյա սուբյեկտների հայտերի հիման վրա։ Այդ թույլտվությունների տրամադրման կամ օգտագործման վճարները գանձվում են փոխադարձության սկզբունքի հիման վրա, իսկ դիվանագիտական կարգավիճակ ունեցող միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններն ազատվում են այդ վճարներից։
- Լրամշակվել է սիրողական ռադիոառատորների թույլտվությունների դասակարգման եւ տրամադրման, սիրողական ռադիոկայանների գրանցման, տեղադրման եւ օգտագործման կանոններն ու որակավորման չափանիշներին սիրողական ռադիոառատորների համապատասխանությունն ստուգելու կարգը։ Կանոնակարգվել են ազգային անվտանգության կամ հանրային շահի

նկատառումներով սիրողական ռադիօպերատորների թույլտվությունների կասեցման կամ դադարեցման ընթացակարգերը:

- Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի օպերատորների կողմից վերջնական օգտագործողներին մատուցված ծառայությունների առավել օգտավետության ապահովման եւ հաճախորդների սպասարկման որակի չափանիշների սահմանման նպատակով հանձնաժողովն ընդունել է «Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորի կողմից նատուցվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման մասին» որոշումը, որով սահմանվել է, որ ամրակցված կապի օպերատորները պարտավոր են իրենց ինտերնետային կայքերում եւ սպասարկման գրասենյակներում հրապարակել ամրակցված կապի ծառայություններով ապահովված աշխարհագրական վայրերում կիրառվող ամրակցված կապի տեխնոլոգիաների եւ նատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն:
- Ընդունվել է «Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի ցանցերից դեպի հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական բջջային կապի ցանցեր կատարվող զանգերի համար միասնական սակագին կիրառելու մասին» որոշում, ըստ որի սահմանվել է, որ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի ցանցերի օպերատորները հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի ցանցերից դեպի հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական բջջային կապի ցանցեր կատարվող զանգերի համար կիրառում են միեւնույն սակագինը՝ ըստ յուրաքանչյուր սակագնային փաթեթի:
- Հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է նաև շարժական կապի ցանցերի եւ ոչ աշխարհագրական սկզբունքով համարների օգտագործմամբ ամրակցված կապի ցանցերի միջեւ փոխկապակցման ծառայությունների վճարների ժամանակացույցը, որի համաձայն նախատեսվում է ոչ աշխարհագրական սկզբունքով համարների օգտագործմամբ ամրակցված կապի ցանցում սկզբնավորված զանգի՝ շարժական կապի ցանցում վերջնավորման փոխկապակցման ծառայության վճարը 2016 թվականի հուլիսի 1-ից հետո սահմանել 9.4 դրամ (առանց ԱԱՀ-ի):
- Էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների կողմից «800» կողով անվճար զանգահարվող ծառայությունների («Փոխ Փոն») սակագնամ միասնական սկզբունքի կիրառման նպատակով փոփոխություններ են

կատարվել համարի եւ կողի զբաղեցման թույլտվության հատկացման եւ օգտագործման կանոններում: Դեպի «800» կողով անվճար զանգահարվող ծառայությունների («ֆրի ֆոն») համարներին զանգահարող բաժանորդներից եւ այդ համարներին կատարված զանգերի դեպքում փոխկապակցման ծառայությունների վճարներ չեն զանձվում: Բացի այդ, օպերատորն իր հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցում գործարկված «ֆրի ֆոն» համարին կատարված յուրաքանչյուր զանգի համար՝ սկզբնավորում իրականացնող օպերատորին վճարում է զանգը սկզբնավորած եւ վերջնավորած հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջեւ սահմանված փոխկապակցման վճարի չափով գումար:

- Էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու նպատակով ձեռք բերվող միջազգային կապուղիների կամ տվյալների հոսքերի աշխարհագրական երթուղիների կարգավորման նպատակով հանձնաժողովն ընդունել է «Միջազգային կապուղիների եւ տվյալների հոսքերի աշխարհագրական երթուղիների համաձայնեցման մասին» որոշում, որով սահմանվել է ցանցերի օպերատորների կողմից միջազգային կապուղիների կամ տվյալների հոսքերի վարձակալման կամ ձեռքբերման դեպքում, դրանց երթուղիների վերաբերյալ հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցման ընթացակարգը:
- Սահմանվել են ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների կարգավորումներ եւ կանոնակարգվել են Հայաստանի Հանրապետությունում պետական կամ հանրային նշանակության իրադարձությունների, միջոցառումների կամ այցերի լուսաբանման համար անհրաժեշտ ռադիոհաճախականությունների օգտագործման պայմանները:
- Լրամշակվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի կանխավճարային եւ հետվճարային հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի արխիվների պահպանման ստանդարտներ սահմանելու կարգը, ըստ որի կանոնակարգվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի ծառայություններ մատուցողների կողմից հանրային շարժական բջջային կապի հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի փաստաթղթային եւ էլեկտրոնային բազաների վարման եւ պահպանման պայմանները: Մասնավորապես, հնարավորություն է ընձեռվել բազաներում պահպանելու պայմանագրերի տեսաներածված պատճենը (scan) կամ էլեկտրոնային


բնօրինակը, եթե պայմանագիրը կնքվել է էլեկտրոնային եղանակով՝ օպերատորի գործառնական գրասենյակում:

Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջեւ մրցակցության զարգացմանը նպաստելու եւ տեխնոլոգիական չեզոքություն պահպանելու սկզբունքների վրա հիմնված կարգավորման քաղաքականության իրականացման արդյունքում արձանագրվել են հետեւյալ զարգացումները.


- Հանրային ամրակցված հեռախոսակապը ներդրվել է հանրապետության բոլոր բնակավայրերում, թվային կայաններին միացվել է հանրային ամրակցված հեռախոսակապի բաժանորդների շուրջ 89 տոկոսը: Արդյունքում՝ Երեւան քաղաքում թվայնացման մակարդակը կազմել է 100 տոկոս, իսկ մարզերում՝ շուրջ 78 տոկոս:
- ՀՀ բոլոր քաղաքային եւ գյուղական համայնքներն ապահովված են հանրային շարժական բջջային կապի 3G տեխնոլոգիայի ծածկույթով: 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ շարժական բջջային կապի բաժանորդների քանակը կազմել է 3434567:
- Զարգացում է ունեցել 4G/LTE տեխնոլոգիայի վրա հիմնված շարժական կապի ցանցը, որը հասանելի է Երեւան, Արագածոտնի մարզի Աշտարակ, Արարատի մարզի Արտաշատ, Արմավիրի մարզի Արմավիր, Վաղարշապատ, Լոռու մարզի Սպիտակ, Ստեփանավան, Վանաձոր, Կոտայքի մարզի Աբովյան, Եղվարդ, Շաղկաձոր, Շիրակի մարզի Արթիկ, Գյումրի, Սյունիքի մարզի Կապան, Մեղրի, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր, Զերմուկ, Վայք եւ Տավուշի մարզի Բերդ, Ղիլիջան քաղաքներում: 2017 թվականի ընթացքում նախատեսվում է 4G/LTE ցանցի ենթակառուցվածքների էական ընդլայնումը նաեւ այլ բնակավայրերում, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության միջպետական մայրուղիների, ինչպես նաեւ բնակավայրերի առնվազն 80 տոկոսն ապահովված կլինի 4G տեխնոլոգիայի լայնաշերտ ինտերնետային ծածկույթով:
- Երեւան քաղաքում ներդրվել է 4G+ տեխնոլոգիայի վրա հիմնված լայնաշերտ շարժական կապի ցանց:
- Միաժամանակ, իրականացված լայնամասշտաբ աշխատանքների արդյունքում Երեւան քաղաքում, Կոտայքի մարզի Յրազդան, Աբովյան, Չարենցավան, Շաղկաձոր, Նոր Յաճըն, Արարատի մարզի Արարատ, Մասիս, Վեդի, Արտաշատ, Վայոց Զորի մարզի Զերմուկ, Եղեգնաձոր, Վայք, Սյունիքի մարզի Քաջարան, Ագարակ, Սիսիան, Գորիս, Կապան, Մեղրի, Արագածոտնի մարզի Աշտարակ, Ապարան, Թալին, Շիրակի մարզի Գյումրի, Արթիկ,

Ամասիա, Աշոցք, Ախուրյան, Մարալիկ, Լոռու մարզի Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր, Տավուշի մարզի Բագրաշեն, Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ, Արմավիրի մարզի Արմավիր, Մեծամոր, Էջմիածին, Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի, Սեւան, ճամբարակ, Վարդենիս բնակավայրերում հասանելի են դարձել FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը: 2017 թվականի ընթացքում այդ ցանցերի ներդրմանն ուղղված աշխատանքները շարունակվելու են նաեւ հանրապետության այլ մարզային բնակավայրերում:

- Տարեվերջի դրությամբ միջազգային «ԱՅՓԻ» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 331000 Մբիթ/վ, որը 2015 թվականի համեմատությամբ աճել է երկու անգամ: Ստորեւ բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի թողունակության 2008-2016 թվականների աճի դինամիկան:




- Մրցակցության արդյունքում միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի աճի շնորհիվ նվազել է նաեւ այդ ծառայության սակագինը: 2016 թվականի տարեվերջին 1 Մբիթ/վ արագությամբ տարանցիկ «ԱՅՓԻ» հոսքի արժեքը կազմել է 3000 դրամ/Մբիթ/վ՝ 2015 թվականի համեմատությամբ նվազելով շուրջ 26%-ով: Ստորեւ բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության սակագների 2008-2016 թվականների նվազման դինամիկան 1 Մբիթ/վ արագությամբ տարանցիկ «ԱՅՓԻ» հոսքի համար:



- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մանրածախ շուկայում (առանց՝ շարժական 3G) գերակշռել են օպտիկամանրաթելային FTTx օգտվող բաժանորդները, որոնց տեսակարար կշիռը 2016 թվականին կազմել է շուրջ 46 տոկոս: Ընդ որում, 2015 թվականի համեմատ FTTx օգտվող բաժանորդների թվաքանակն աճելով շուրջ 14 տոկոսով: Միեւնույն ժամանակ, արձանագրվել է մոտ 6 տոկոս նվազում լարային xDSL տեխնոլոգիայով ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների թվաքանակում:
- Մանրածախ շուկայում լայն տարածում են ստացել առավել արագագործ տեխնոլոգիաների (օրինակ՝ FTTx) վրա հիմնված ինտերնետ հասանելիության սակագնային փաթեթներ, որոնք սպառողներին առաջարկում են ինչպես ինքնուրույն ծառայության, այնպես էլ «Երեքը մեկում (Triple Play)» ձեւաչափով՝ ներառելով նաև «ԱՅՓԻ» հեռուստատեսություն եւ հեռախոսակապ: Մասնավորապես, շուկայում «Երեքը մեկում» ծառայությունների փաթեթով «ԱՅՓԻ» հեռուստատեսության եւ հեռախոսակապի հետ միասին առաջարկում է ինտերնետ հոսքի 20Մբ/վ-ից մինչեւ 100Մբ/վ արագություններ՝ 10000 դրամից մինչեւ 24000 դրամ սակագներով: Մանրածախ շուկայում ամրակցված եւ շարժական կապի համակցմամբ օպերատորների կողմից առաջարկվել է նորարարական «Չորսը մեկում (Quad Play)» ծառայությունների փաթեթը, որը ներառում է ամրակցված կապի տեխնոլոգիայի հիման վրա մատուցվող հեռախոսակապը, ինտերնետ հասանելիությունը, «ԱՅՓԻ»


հեռուստատեսությունը, ինչպես նաև շարժական բջջային հեռախոսակապը:

- Ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը (այդ թվում՝ շարժական 3G եւ 2G) 2016 թվականին կազմել է 2411519, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է շուրջ 9.6 տոկոսով:
- Ավելացել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների քանակը (ներառյալ՝ շարժական 3G) 2016 թվականին կազմել է 1911089, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ գրանցվել է բաժանորդների քանակի աճ 26 տոկոսով: Ստորեւ բերված է լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների քանակի 2008-2016 թվականների աճի դիմամիկան:



- Ավելացել են շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների քանակը 2016 թվականին կազմել է 1611919, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ գրանցվել է բաժանորդների քանակի աճ 30 տոկոսով: Ստորեւ բերված է շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակի 2012-2016 թվականների աճի դիմամիկան:

**Շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիությամբ
բաժանորդների քանակը 2012-2016թթ.**



8. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը եւ համագործակցությունը զանգվածային լրատվության միջոցների ու հասարակական կազմակերպությունների հետ

Հանձնաժողովը, օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում, հրավիրված դռնբաց նիստերի ընթացքում ընդունում է որոշումներ, որոնց կատարումը պարտադիր է կարգավորվող ընկերությունների համար: 2016 թվականի ընթացքում, հավատարիմ իր հրապարակային եւ թափանցիկ գործելամիջն ինչպես նաև նպատակ ունենալով հանրությանը հնարավորինս ներգրավել հանրային ծառայությունների կարգավորման գործընթացում, հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում պարբերաբար հրապարակել է նանրամասն տեղեկատվություն նիստերում քննարկվող հարցերի վերաբերյալ: 2016 թվականին հրավիրվել է հանձնաժողովի 85 նիստ եւ ընդունվել 439 որոշում:

Կարեւորելով զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցությունը՝ հանձնաժողովը նրանց կողմից բարձրացված գրավոր եւ բանավոր հարցադրումներին սահմանված ժամկետներում պարզաբանումներ է տրամադրել: Ապահովել է զանգվածային լրատվության միջոցների մասնակցությունը հանձնաժողովի նիստերին եւ հանրային քննարկումներին, ինչը նպաստել է կարգավորող մարմնի գործունեության թափանցիկության, հրապարակայնության եւ սպառողների հրագեկվածության աստիճանի բարձրացմանը:

Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքը, որը թարմացվում է

շաբաթական առնվազն երկու անգամ, զանգվածային լրատվամիջոցներին, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին եւ ցանկացած շահագրգիռ անձի հնարավորություն է ընձեռում տեղեկանալ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացին, ծանոթանալ հանձնաժողովի գործունեությանը, ստանալ ծառայությունների սպասարկման որակի եւ սպառողների իրավունքների վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն:

Կարեւորելով սպառողների հետ աշխատանքը՝ հանձնաժողովը հանրային հնչեղություն ունեցող, մասնավորապես, սակագների ձեւավորմանը, փոփոխությանը եւ սպառողների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի շուրջ սերտ համագործակցել է սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ, ինչի արդյունքում եւս բարձրացել է հանրության իրազեկվածության մակարդակը:

Հաշվի առնելով հանրության առջեւ հաշվետու լինելու օրենքի պահանջը, ինչպես յուրաքանչյուր տարի, 2016 թվականին եւս, հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում եւ տպագիր մամուլում իրապարակել է նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը:

2016 թվականին հանձնաժողովի անդամները եւ աշխատակազմի մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես են եկել ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով եւ հարցազրույցներով: Կատարվել է մամուլի իրապարակումների ամենօրյա վերլուծություն: Հանձնաժողովի եւ կարգավորվող ոլորտների գործունեության մասին իրապարակումները ներկայացվել են աշխատակազմին՝ դիտարկելի դարձնելով ծառայություններ մատուցող ընկերությունների եւ հանրության կարծիքն ու գնահատականը:

9. Հանձնաժողովությունը միջազգային կառույցների եւ Արցախի Հանրապետության կարգավորող մարմնի հետ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2016 թվականի ընթացքում համատեղ աշխատանքներ է իրականացրել մի շարք միջազգային կառույցների եւ օտարերկրյա կազմակերպությունների, մասնավորապես՝ Ասիական զարգացման բանկի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, ԱՄՆ կարգավորող հանձնաժողովների ասոցիացիայի, Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի, Հեռահաղորդակցության միջազգային միության,

Կապի տարածաշրջանային համագործակցության, Արեւելյան գործընկերության էլեկտրոնային հաղորդակցության կարգավորողների, Միջազգային ջրային համակարգի ասոցիացիայի եւ այլոց հետ:

2016 թվականի հոկտեմբեր ամսին հանձնաժողովի եւ Վրաստանի էներգետիկայի կարգավորման ազգային հանձնաժողովի միջեւ ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակում Երեւանում կայացել է Երկու Երկրների կարգավորող մարմինների աշխատանքային հանդիպումը, որի ընթացքուն անցկացվել են խորհրդակցություններ եւ ելույթներ հետեւյալ թեմաներով՝ «Հաշվապահական հաշվառման հաշիվների միասնական համակարգ», «Սերդրումային գործունեության մոնիթորինգ», «Սերդրումների պլանավորում եւ համաձայնեցում, ներդրումային նախագծի վերլուծություն», «Նոր սպառողների միացումը էլեկտրական ցանցին», «Մատակարարման որակի կարգավորում», «Էլեկտրաէներգիայի շուկայի զարգացման եւ ազատականացման միտումները», «Էներգետիկայի ոլորտում լիցենզավորման հիմնական սկզբունքները» եւ «Ոռոգման ննթակառուցվածքի կարգավորում»:

2016 թվականին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի եւ Չեխիայի հեռահաղորդակցության հանձնաժողովի միջեւ ստորագրվել է Փոխընթանան հուշագրի, որի նպատակն է խրախուսել բարձրորակ եւ արդյունավետ հեռահաղորդակցության ծառայությունների զարգացումը, փոխանակել տեղեկատվությունը էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորման շրջանակում եւ կազմակերպել համատեղ նիստեր, քննարկումներ, սեմինարներ եւ այլ միջոցառումներ էլեկտրոնային հաղորդակցության կարգավորման ոլորտում:

Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են Եվրասիական տնտեսական միության գագի ընդհանուր շուկայի ձեւավորման աշխատանքային խմբի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիային կից էլեկտրաէներգետիկայի խորհրդատվական կոմիտեի Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձեւավորման ենթակոմիտեի եւ Եվրասիական տնտեսական միության բնական մենաշնորհների խորհրդատվական կոմիտեի նիստերի աշխատանքներին: Հանձնաժողովը ներկայացված է նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սպառողների իրավունքների պաշտպանության խորհրդատվական կոմիտեում:

Հանձնաժողովը մասնակցել է ՀՀ-ԵՄ նոր շրջանակային համաձայնագրի «Մրցակցություն», «Ծառայությունների առեւտուր» եւ «Պետական մասնակցությամբ ձեռնարկություններ» գլուխների մշակման բանակցային աշխատանքներին եւ այդ

գործընթացի շրջանակում հանձնաժողովի իրավասություններին առնչվող ԵՄ հրահանգների վերաբերյալ իրականացրել է վերլուծություններ եւ ներկայացրել տեղեկանքներ:

Հանձնաժողովը մասնակցել է նաեւ Եվրոպական Միության Արեւելյան գործընկերության ծրագրի շրջանակում ստեղծված էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորող մարմինների խնբի աշխատանքներին: Մասնավորապես, հանձնաժողովի աշխատակիցները մասնակցություն են ունեցել Եվրոպական Միության Արեւելյան գործընկերության ծրագրի շրջանակում կազմակերպված լիազումար նիստերին եւ աշխատանքային սեմինարներին, որտեղ քննարկվել են էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորմանն առնչվող բազմաթիվ խնդիրներ:

Արդյունավետ համագործակցություն է իրականացվում Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները եւ տնտեսական նրանքությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ: Երկու կարգավորող մարմինների համատեղ աշխատանքային ծրագրի շրջանակում իրականացվել են համապատասխան օրենքների եւ կանոնների նախագծերի մշակման, լրամշակման, ոլորտների մասնագետների փորձի փոխանակման, ինչպես նաեւ նախանշված քննարկումներին եւ այլ միջոցառումներին մասնակցության աշխատանքներ՝ ճյուղային եւ ֆունկցիոնալ բոլոր ուղղություններով:

Համագործակցության շրջանակում, ՀՀ ռադիոսպորտի ֆեդերացիայի աջակցությամբ Արցախի Հանրապետությունում հիմնադրվել է ռադիոսպորտի ֆեդերացիա եւ կազմակերպվել կոլեկտիվ ռադիոկայան եւ ռադիոկոնսուլտուրավորման խմբակ: Միաժամանակ, ստորագրվել է փոխանակության հուշագիր՝ Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիաների միջեւ:

10. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովումը

Հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող ընկերություններն ապահովում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի զգալի մուտքեր՝ լիցենզիաների (բույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման եւ օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև նոր արտադրական հզորությունները լիցենզիաների գործողության ժամկետում չգործարկելու կամ լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու

համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: 2016 թվականին նշված աղբյուրներից Յայաստանի Յանրապետության պետական բյուջե փոխանցվել է շուրջ 7.5 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ 6.4 մլրդ դրամը, կազմել են ռադիոհաճախականությունների օգտագործման եւ թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը: